ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

21. 10. 2021 *Ք. Իջևան*

Նախագահ՝ Վ.Ա. Աղաբաբյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում: (Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան)
2. 2021-22 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին: (Զեկուցող՝Վ. Աղաբաբյան)
3. Ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաների հաստատում: (Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան)
4. Մասնաճյուղից բավարարվածության ուսանողական հարցման արդյունքների մասին: (Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան)
5. Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ Վ.Աղաբաբյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփումը: Նա նշեց, որ լուծարքային շրջանը կազմակերպվել է ժամանակացույցին համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել:

Զեկուցողը նշեց, որ քննաշրջանին մասնակցել է 66 ուսանող: Անբավարար գնահատականներ են ստացել 8 ուսանողներ, որոնցից 1 անբավարար ստացել է 5 ուսանող, 3 և ավելի անբավարար՝ 3 ուսանող: Լուծարքային շրջանին մասնակցած ուսանողների գերակշիռ մասը դրական գնահատական են ապահովել 1-ին լուծարքային շրջանի ժամանակ: Զեկուցողը ըստ կուրսերի ներկայացրեց լուծարքային շրջանի ընդհանուր պատկերը.

«Դիզայն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել են 6 ուսանողներ, որոնք լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել են 2 ուսանողներ, որոնք դրական միավոր են ստացել լուծարքային շրջանում:

Զեկուցողը նշեց, որ 100% առաջադիմություն արձանագրվել է «Դիզայն» կրթական ծրագրի III, IV և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի II կուրսերում: Ամենացածր առաջադիմություն արձանագրվել է «Դիզայն» կրթական ծրագրի II կուրսում (76,92): Ֆակուլտետի բացարձակ առաջադիմությունը կազմել է 87.88:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյանը, Տ. Բագամյանը, Ք. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ 2021-22 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննություններ-ի նախապատրաստական աշխատանքները նախօրոք կազմակերպված է: Զեկուցողը փաստեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է

ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան՝ մատենավարության վիճակը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետում կան Քովիդ-19-ով վարակված ուսանողներ: Վերջիններս, առողջական խնդիրներից ելնելով, չեն կարողանա մասնակցել ընթացիկներին և համապատասխան հավաստող փաստաթղթի ներկայացման դեպքում նրանց համար կկազմակերպվեն լրացուցիչ քննություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը, Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

2. Ուսումնամեթոդական վարչություն ներկայացնել առողջական խնդիր ունեցող ուսանողների ցուցակները՝ կիսամյակի ընթացքում լրացուցիչ քննություններ կազմակերպելու նպատակով:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցող ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը ներկայացրեց ֆակուլտետում ուսուցանվող կրթական ծրագրի կողմից տրված ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաները: Նա նշեց, որ ֆակուլտետի «Դիզայն» կրթական ծրագրի ավարտական կուրսում կա 8 ուսանող: Գիտական ղեկավարների կողմից առաջադրված թեմաները նախապես քննարկվել են ամբիոններում, համապատասխանում են գիտականության չափորոշիչներին, արդիական են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների ղեկավարները նշեցին, որ ամբիոններում քննարկվել են թեմաների վերնագրերը, հստակեցվել ներկայացվող պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2021-2022 ուստարվա ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ 2021 թվականի հունիսին մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից իրականացվել է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության» ամենամյա ուսանողական առցանց հարցումը: Հարցմանը ներգրավված են եղել բոլոր մասագիտությունների 1-ից 3-րդ կուրսերի ուսանողները: Հարցումն առցանց է եղել, հարցմանը մասնակցելու հղումն ստացել են մասնաճյուղի առկա ուսուցման 1-ից 3-րդ կուրսի 394 ուսանողներ, սակայն հարցմանը մասնակցել են 206-ը, այսինքն ընդամենը **52%-ը**, որը միգուցե առցանց հարցումների դեպքում մասնակցության վատ ցուցանիշ չէ, սակայն ցանկալի կլիներ, որ մեր ուսանողներն առավել ակտիվություն ցուցաբերեին և նպաստեին իրենց խնդիրների բացահայտմանը և լուծմանը:

«Դիզայն» կրթական ծրագրի 30 ուսանողներից հարցմանը մասնակցել է 15-ը, իսկ «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 17 ուսանողներից՝ 8-ը:

Զեկուցողը նշեց, որ հարցման նպատակն էր պարզել, թե մասնաճյուղի ուսանողները որքանո՞վ են իրազեկված և ներգրավված ուսումնակազմակերպչական գործընթացներում, որքանո՞վ են բավարարված առկա ռեսուրսներից և ծառայություններից, որքանո՞վ է մասնաճյուղը հասանելի տեղեկատվական հարթակներում և կիրառելի ուսանողների կողմից:

Այն հարցին՝ «Պատկերացնում են, թե ի՞նչ մասնագետ են դառնալու ավարտելուց հետո», հարցմանը մասնակցած «Դիզայն» կրթական ծրագրի ուսանողների 47%-ը, իսկ «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի ուսանողների 50%-ը «պատասխանել է՝ այո, որը կարելի է համարել բավարար ցուցանիշ: «Դիզայն» կրթական ծրագրի ուսանողների 6%-ը և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի ուսանողների 25%-ը պատասխանել է՝ ոչ:

Խնդրահարույց է այն իրավիճակը, որ հարցմանը մասնակցած «Դիզայն» կրթական ծրագրի ուսանողների 47%-ը և «Դեկորատիվ-կիրառական արվեստ»

կրթական ծրագրի ուսանողների 25%-ը մասամբ է պատկերացնում իր ապագա մասնագիտությունը։ ՈՒսանողի մոտիվացվածությունը կլինի բարձր, իսկ ուսումնառության նկատմամբ նրա վերաբերմունքը նպատակային և արդյունավետ, եթե նա իր մասնագիտությունն ընտրել է գիտակցաբար, հասկանալով, թե ի՞նչ մասնագիտություն է ցանկանում ձեռք բերել, ի՞նչ մասնագետ է ուզում դառնալ։ Այսինքն, կամ դա խոսում է մեր ուսանողների անտարբերության մասին, կամ խնդիր ունենք կրթական ծրագրերի իրականացման, կրթական վերջնարդյունքների սահմանման և դրանց հասնելուն միտված ուսուցման գործընթացի հետ։

Զեկուցողը ներկայացրեց նաև, որ ուսումնական խորհրդատուներից և կրթական ծրագրերի ղեկավարներից «Դիզայն» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերի ուսանողների բավարարվածության տոկոսը 50%-ից ցածր է։ Հարցմանը մասնակցած ուսանողների գրեթե մեկ երկրորդը գտնում է, որ իրենց մասամբ են ծանոթացրել կրթական ծրագրին («Դիզայն»՝ 47%, «Դեկորատիվ-կիրառական արվեստ»՝ 38%)։ Ենթադրում ենք, որ այս թվերն ավելի շուտ խոսում են ուսանողների անտարբերության մասին և հակված ենք մտածելու, որ ուսումնական խորհրդատուները և կրթական ծրագրերի ղեկավարներն այնուամենայնիվ աշխատել են ուսանողների հետ։

Ուսանողների կողմից նշվել են, որ ըստ իրենց, թեմատիկ կրկնություններ կան «Գունանկար» և «Գծանկար» առարկաների մոդուլներում։

«Ի՞նչ առարկաներ կհանեիք, կամ նոր ի՞նչ առարկաներ կավելացնեիք ձեր կրթական ծրագրի ուսումնական պլանում» բաց հարցի պատասխաններում մեր ուսանողները նշել են «Ապակենկարչության», «Zbrush» նոր դասընթացներ ավելացնելու մասին։

Ուսանողական կառույցներին վերաբերող հարցերին պատասխանած ուսանողներից «Դիզայն» կրթական ծրագրի 2 և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 1 ուսանող տեղեկացված չէ ուսանողական խորհրդի (ՈՒԽ), իսկ 1-ական ուսանող տեղեկացված չէ ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) գործունեությունից։ Տեղեկացված և ուսանողական կառույցներում ներգրավված կամ համագործակցող ուսանողներն, ընդհանուր առմամբ, բավարարված են նրանց գործունեությունից։ Ուսանողական խորհրդի գործունեությունից բավարարված են հարցմանը մասնակցած ուսանողներից «Դիզայն» կրթական ծրագրի 4-ը և

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 3 ուսանող, իսկ ուսանողական գիտական ընկերության գործունեությունից համապատասխանաբար՝ 7 և 2 ուսանող։

Հարցման շրջանակներում հետազոտել են նաև մասնաճյուղի ռեսուրսներից և ծառայություններից՝ գրադարանից, ընթերցասրահից, մասնաճյուղի պաշտոնական կայքից և ֆեյսբուքյան էջից, էլեկտրոնային գրադարանից, բուժկետի ծառայությունից ուսանողների բավարարվածությունը։ Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի ուսանողների բավարարվածության աստիճանը մասնագիտական գրականության քանակից և որակից այնքան էլ բարձր չէ։ Մասնագիտական անհրաժեշտ գրականության քանակի և որակի բացը լրացվում է էլեկտրոնային գրադարանի միջոցով։ Գրադարանում առկա գրքերի քանակից լիարժեք բավարարված են «Դիզայն» կրթական ծրագրի ուսանողների 15**%**-ը, իսկ ահա 46**%-**ը բավարարված են մասամբ։ Ավելի անհասկանալի է, որ ունենք նաև **38%** չբավարարված ուսանողներ։ Գրքերի քանակից լիարժեք բավարարված են «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի ուսանողների 13**%**-ը, իսկ ահա 50**%-**ը բավարարված են մասամբ։ Ավելի անհասկանալի է, որ այստեղ ևս ունենք նույն **38%** չբավարարված ուսանողները։ Գրականության որակի առումով ևս բավարարվածության ընդգծված ցածր արդյունք ունենք՝ «Դիզայն»՝ 31% և «Դեկորատիվ կիրառական արվեստ»՝ 43%։ Չմոռանանք, որ այս արդյունքների վրա իրենց ազդեցությունն ունեն նաև ընթացիկ ուստարում առաջին անգամ իրականացված հետազոտական աշխատանքները, որոնք մեծացրել են նոր, նեղ մասնագիտական գրականության պահանջարկը, բարձրացրել դրանց որակի նկատմամբ չափանիշները։

Հարցմանը մասնակցած ուսանողները հիմնականում բավարարված են բուժկետի ծառայություններից («Դիզայն» կրթական ծրագրի 6 ուսանող բավարարված են, 6-ը՝ բավարարված են մասամբ, իսկ 2-ը՝ բավարարված չեն։ «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 4 ուսանող բավարարված են, 4-ը՝ բավարարված են մասամբ)։ Ուղղակի խնդիր կա ֆակուլտետից նրա հեռու տեղակայման հետ կապված։

Զեկուցողը նշեց, որ ուսումնասիրվել են նաև ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղում տեղեկատվության ստացման հնարավորություններից, մատչելիությունից և բովանդակությունից։ Մասնաճյուղն իր

գործունեության մասին ամբողջ տեղեկատվությունը հանրությանը, մասնավորապես ուսանողներին տրամադրում է իր պաշտոնական էլ.կայքի և ֆեյսբուքյան էջի, էլեկտրոնային գրադարանի էջի միջոցով:

Պարզվում է, որ թեկուզ քիչ թվով, սակայն կան ուսանողներ, որոնք ընդհանրապես չեն օգտվում մասնաճյուղի պաշտոնական կայքից («Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 1 ուսանող), կամ օգտվում են հազվադեպ («Դիզայն» կրթական ծրագրի 8 և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 3 ուսանող), ինչն իհարկե, վատ է և մեկ անգամ ևս խոսում է նրանց անտարբերության մասին: Կան նաև ուսանողներ («Դիզայն» կրթական ծրագրի 5 և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 3 ուսանող), որոնք հաճախ է օգտվում կայքից: «Դիզայն» կրթական ծրագրի 2 և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 1 ուսանողի համար մասնաճյուղի պաշտոնական կայք-էջը տեղեկատվության ստացման մշտական աղբյուր է: Ամբողջովին նույն արդյունքներ են նաև մասնաճյուղի ֆեյսբուքյան էջի հետ կապված:

Անդրադառնալով մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի էջին, նշենք, որ այն բավականին հաջողությամբ լրացրեց մասնաճյուղի գրադարանային ֆոնդը, ավելացրեց նոր գրականություն ունենալու հնարավորությունը, իր դիզայնով և մատչելիությամբ մասնաճյուղի ուսանողների համար դարձավ տեղեկատվական ամենապահանջված հարթակը, սակայն մեր ուսանողների հիմնական մասը չի օգտվում էլեկտրոնային գրադարանից:

Զեկուցողը, ամփոփելով հարցման արդյունքները, փաստեց, որ ուսանողները մեծամասամբ իրազեկված են և նաև բավարարված իրենց ուսումնառությանն աջակցող և նպաստող բոլոր ռեսուրսներից և ծառայություններից: Խնդրահարույց է այն իրավիճակը, որ հարցմանը մասնակցած «Դիզայն» կրթական ծրագրի ուսանողների 47%-ը և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի ուսանողների 25%-ը մասամբ է պատկերացնում իր ապագա մասնագիտությունը: Այսինքն, կա՛մ դա խոսում է մեր ուսանողների անտարբերության մասին, կա՛մ խնդիր ունենք կրթական ծրագրերի իրականացման, կրթական վերջնարդյունքների սահմանման և դրանց հասնելուն միտված ուսուցման գործընթացի հետ: Այս ուղղությամբ կարևոր է ակտիվացնել ուսանողների և կրթական ծրագրերի ղեկավարների համագործակցությունը, վերջիններիս և դասախոսական կազմի

աջակցությամբ ուսանողներին հասկանալի դարձնել կրթական ծրագրում ներառված յուրաքանչյուր դասընթացի դերը։

«Դիզայն» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերի ուսանողների բավարարվածության տոկոսը ցածր է կրթական ծրագրերի ղեկավարներից։ Մենք կարծում ենք, որ սա արդյունք է նաև «Դիզայն» կրթական ծրագրի ղեկավարի բացակայության։ Կարիք կա, որ կրթական ծրագրերի ղեկավարիներն վերանայել ուսանողների հետ համագործակցության մեթոդները և լինել առավել հետևողական։

Կարիք կա նաև վերանայել կրթական ծրագրերը և հնարավորինս բացառել թեմատիկ կրկնությունները։ Բացի այդ՝ պետք է հանձնարարել ամբիոնին կատարել ուսումնասիրություններ և պարզելու, թե որքանով է նպատակահարմար առաջարկված նոր առարկաները ներդնելը։

Ցածր է նաև ուսանողների բավարարվածության աստիճանը ուսանողական կառույցների աշխատանքից։ Նրանք պետք է հնարավորինս մեծ թվով ուսանողներ ներգրավեն, հատկապես 1-ին կուրսերից, և իրենց գործունեությամբ աջակցեն ֆակուլտետների ղեկավարությանը՝ ուսանողների խնդիրների լուծման և նրանց մոտիվացիայի բարձրացման գործում։

Ցածր է մեր ուսանողների բավարարվածության աստիճանը մասնագիտական գրականության քանակից և որակից։ Ճիշտ է, մասնագիտական անհրաժեշտ գրականության քանակի և որակի բացը լրացվում է էլեկտրոնային գրականության միջոցով, բայց կարիք կա նաև ուշադրություն դարձնել էլեկտրոնային գրականության որակին։

Ֆակուլտետի ուսանողները առաջարկում են փոխել մասնաճյուղի կայք-էջի դիզայնը, իսկ ահա ֆեյսբուքյան էջում առաջարկում են ավելի հաճախ ու բազմակողմանի անդրադառնալ ուսանողական կյանքին և ուսանողների կատարած աշխատանքներին:

Մեր ուսանողների հիմնական մասը չի օգտվում էլեկտրոնային գրադարանից։ Այստեղ պետք է պարզել, թե ո՞րն է խնդիրը. արդյո՞ք անհրաժեշտ գրականություն տեղադրված չէ, քիչ է, կամ ուղղակի գրադարանի գրականությունը բավարարում է և էլեկտրոնայինի կարիք չկա և այլն։ Այս խնդիրը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի և խորհուրդ ենք տալիս գրադարանի աշխատակազմին և

համապատասխան կրթական ծրագրերի ղեկավարներին հանդիպել և այդ հարցը քննարկել ուսանողների հետ, պարզել պասիվության պատճառը, առաջարկել դրանց լուծման ճանապարհներ։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Մխիթարյանը, Հ. Ասատրյանը, Ա. Չիբուխչյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ.

Մասնաճյուղի բավարարվածության ուսանողական հարցման արդյունքներ ընդունել ի գիտություն։

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Աղաբաբյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Մխիթարյան

(Հավելված 1)